

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԱՄԱՍ⁵⁴

Ողջայա Հարությունյան

Բանակի բառեր՝ անվտանգություն, հոգեբանական անվտանգություն, ԶԼՄ-ներ, տեղեկատվական պատերազմ, տեղեկատվական անվտանգություն, սոցալականացուն

Տեղեկատվական հոգեբերի կտրուկ ածող սպառնալիքներն ու մշակութային տուալ հարձակումները XXI դարի լուրջ ու հրատապ խնդիրներից են: Այս առումով, անձի անվտանգության մարտահրավերները ծերը են բերել որակապես նոր կարուցվածք: Անձի հոգեբանական անվտանգությունը ներառում է ոչ միայն հոգեկանի բովանդակության կայունությունը, այլև սոցիալական միջավայրի և հասարակության հետ հարաբերություններում անձի կայունությունը [1]: Ըստ որում հոգեբանական անվտանգությունը պայմանավորում են այնպիսի կարևոր գործոններ, ինչպիսիք են էտապնային խումբը, սոցիալական միջավայրն ու նրա ունեցած ազդեցությունը, տեղեկատվության ահրելի հոգեբերը (ԶԼՄ-ները), որոնք սրբեսածին են և բացասաբար են ազդում օրգանիզմի ներքին պաշարների ու ֆիզիկական առողջության վրա: Մի շաբթ հեղինակներ հոգեբանական անվտանգության շրջանակներում դիտարկում են սոցիալական, աշխատանքի, տեղեկատվական անվտանգության հոգեբանության, ինչպես նաև ինքնապահովման ու կորպորատիվ անվտանգության, արտակարգ իրավիճակների և ահաբեկչության հոգեբանությունը [2]:

Անտարակույս, այս հասկացությունները սերտ փոխկապակցված են հոգեբանական անվտանգություն հասկացության հետ: Հոգեբանական անվտանգությունն ու պաշտպանությունը հրատապ հարցեր են, և դրանց գորպալացումը կնպաստի ընդհանուր կենսամակարդակի բարձրացնան և հոգեբանական առողջության ամրապնդմանն ու պահպանմանը:

Տեղեկատվական անվտանգություն հասկացությունը հասարակության տեղեկատվական միջավայրի պաշտպանվածության վիճակն է, որն ապահովում է նրա ծևավորումը և զարգացումը՝ ի շահ քաղաքացու, հասարակության և պետության: Այս համատեքստում հետաքրքիր է հոգեբան Կ. Նալչաջյանի կարծիքը, համաձայն որի, ազգային հոգեբանության նվազման և ինքնագիտակցության թուլացման հետևանքով այսօր Հայաստանը կանգնած է ազգային ինքնության վերացման սպառնալիքի արժեք, որը նաև արտագործի, մշակութային, կրթական արժեքների թուլացման պատճառ է [3]:

Իրենց դրական կողմերով համներձ՝ տեղեկատվական-հաղորդակցական գործընթացները կարող են վտանգ պարունակել: Դրանք ողջ հասարակության և անձի զարգացմանը իրական վտանգ են ներկայացնում: Ընդ որում այս ամենն անդրադարձում է ոչ միայն անձնային շփումների, այլև հանրային կոմունիկացիաների վրա: Կիրառվող մեխանիզմները բազմաթիվ ու բազմազան են, սակայն լավագույնը՝ մանիպուլյացիան է, իր տարրեր ծևերով ու դրսևորումներով:

Տեղեկատվական-հոգեբանական ազդեցության տարրեր միջոցների ու տեխնիկաների օգտագործումը այս կամ այն երևույթը շահարկելու համար, առօրյա կյանքում դարձել է սովորական երևույթ քաղաքական ու տնտեսական մրցակցության մեջ:

⁵⁴ Հոդվածն ընդունվել է 26.02.2018:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՒՅ ՀԱՍԱԼԱՐՄԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Գիտակցելով խնդրի լրջությունն ու սպառնալիքները անձի ճիշտ սոցիալականացման գործում՝ հոգեբանական պաշտպանության մեխանիզմնենի ձևավորումն ու կատարելագործումը ոչ միայն տեսական խնդիր է, այլև առօրյա կյանքի և սոցիալական պրակտիկայի հույժ անհրաժեշտություն։ Ուստի մասհրման ընթացքում փորձ է արվել անդրադարձնալի հետևյալ առանցքային խնդիրներին։

Որոշել անձի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության ըմբռնումը։

1. Արանձնացնել անձի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության սպառնալիքները և դրանց սկզբնաղբյուրները։

2. Դիտարկել հոգեբանական մանիպույացիայի էությունը, որպես անհատի քողարկված հոգեբանական պարտադրանքի մեխանիզմ։

3.Ցույց տալ, որ հոգեբանական մանիպույացիայի գանգվածային բաշխումը հանդես է գալիս որպես անձի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հիմնական սպառնալիք։

4. Նկարագրել անձի գաղտնի հարկադրանքը՝ որպես սոցիալ-հոգեբանական երևոյթ, որը բնորոշ է մարդկանց սոցիալական փոխազդեցություններին տարբեր սոցիալական ոլորտներում և պատմա-մշակութային պայմաններում։

5.Որոշել անձի հոգեբանական պաշտպանության բովանդակությունը, ցույց տալով համակարգային բնույթը, ընդգծել կառույցը և նկարագրել հիմնական տարբեր օբյեկտների, առարկաների, մեթոդների, և անձի հոգեբանական պաշտպանության հիմնական ուղղությունները։

6.Ցույց տալ, որ անձի հոգեբանական պաշտպանությունը հանդիսանում է՝ տեղեկատվական-հոգեբանական անվտանգությունը ապահովող հիմնական միջոց [4]:

Ընդհանրապես անձի վրա ագրում է ոչ միայն մշտական տեղեկատվական շիտումը շրջապատող սոցիալական իրականության հետ, այլ նաև դրա բացակայությունը։ Տեղեկատվության հոսքի դադարումը կամ տեղեկատվության սահմանափակումը կարող է բերել հոգեկան լուրջ անոմալիաների՝ ընդհուպ մինչ հոգեկան խանգարում։ Չի կարելի թերագնահատել տեղեկատվության հմարավորությունն ու դրա ագդեցությունը անձի վրա։

Ինչպես նշում են խնդիրն ուսումնասիրողներից Վ. Պ. Պուգաչովը և Ա. Ի. Սոլովյովը. «Անձը և նրա ամենօրյա կյանքը ավելի ու ավելի են կախված ԶԼՄ-ից, որոնք էլ նրա համար ստեղծում են այսպես ասած «երկրորդ իրականություն», «սուբյեկտիվ իրականություն», որը ոչ պակաս կարևոր է, քան օբյեկտիվ իրականությունը»[5]: Եթե փորձենք առանձնացնել տեղեկատվական-հոգեբանական ագրեցությունը ըստ խմբերի, ապա առաջինի մեջ պետք է ներառել միջանձնային փոխգործակցության հաղորդական իրավիճակները, այսինքն՝ ուղղակի կապի և տեղեկատվության փոխանակումը, ինչպես ասում ենք դեմ առ դեմ շփումը, ինչպես նաև անուղղակի շփումը (հեռախոս, փոստային, հեռագրական և այլն):

Հաջորդ խմբի մեջ կարելի է ներառել միջանձնային հաղորդակցման այնպիսի իրավիճակներ, երբ անձը գտնվում է հասարակության որևէ խմբի կամ հանրությի մեջ, որի վրա անմիջապես օգտագործվում է կոմունիկատորի տեղեկատվական-հոգեբանական ազդեցությունը (նախագահություն, խոսնակ):

Հաջորդ խումբը կարող են համարել այն իրավիճակները, երբ անմիջապես օգտագործվում է ԶԼՄ-ի ագդեցությունը: Դա կատարվում է առօրյա կենցաղային պայմաններում, մեր աշխատանքային և հանգստի ժամերին, օրինակ՝ հեռուստացույց նայելուց, ռադիո լսելիս, համացանցից օգտվելիս, թերթեր և ամսագրեր ընթերցելուց, այսինքն՝ ամենուր:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՇՏՈՑ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Ընդհանրապես ԶԼՄ-ների գործառույթները կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝

-մարդու՝ որպես անձ և անհատ պահանջմունքները բավարարողի,

-որոշ սոցիալական խմբերի և այդ խմբերում ներառված անձի պահանջմունքները բավարարող,

-հասարակության, որպես սոցիալական համակարգի միասնական տարր և անձի՝ որպես հասարակության անդամի պահանջմունքները բավարարող [6]:

ԶԼՄ-ների միջոցով իրագործվում է սոցիալական շատ կարևոր գործառույթ՝ ինտեգրացիա: Ավելին է այն սոցիալականացման գործնարարությունը և անբաժան մասնիկն:

Տեղեկատվական-հոգեբանական պատերազմի հիմնական հարթակը երկրի հասարակ բնակչությունն է՝ նրա նյարդահոգեկան կայունությունն ու առողջությունը պահպանությունը կամ անդեմքը:

ԶԼՄ-ները իրենց ծրագրերը պատրաստելիս առաջնորդվում են ընդհանուր կանոններով ու սկզբունքներով: Այդ ամենով հանդերձ, ինչպես նշում է Վ. Պ. Պուգաչովը. «...Նյութերի ընտրության նրանց որդեգրած սկզբունքները չեն համատեղվում խորը վերլուծական հաղորդագրությունների հետ և հաճախ կանխում են տեղեկատվական աշխարհի պատկերի ստեղծմանը՝ քիչ թե շատ իրականությանը համարժեք»[7]: Հարկ է անդադար այն հինգ սկզբունքներին, որոնք առաջարկվում են տեղեկատվական աշխարհի ու իրականության համարժեքի միջև առկա կապը բացահայտելու համար:

Քաղաքացիների համար թեմայի առաջնությունն ու գրավչությունը (իրական և երևակայական) համաձայն այդ սկզբունքի լրատվամիջոցները առավել հաճախ շոշափում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են քաղաքացիների խաղաղության և անվտանգության սպառնալիքը, ահաբեկչությունը, էկոլոգիական և այլ աղետները:

1. Փաստերի արտահերթություն: Սա նշանակում է որ տեղեկատվություն՝ արտակարգ իրադարձություններով, պատերազմներ, բռնի հանցագործություններ և այլ այնպիսի բացասական նորություններ, որոնք գերակայում են առօրյա կյանքի լուսավոր ու պայծառ իրողություններին [8]:

Մրանով էլ բացատրվում է ԶԼՄ-ների միտումը, մասնավորապես բացասական բնույթի տեղեկատվության և սենսացիայի նկատմամբ: Նոյնը ակնառու ծնով ականատես եղավ մեր ժողովուրդը, որի մոտ դեպքեակի տրամադրություններ էին ստեղծել ԶԼՄ-ներն ու հատկապես համացանցը: Տեղեկատվական պատերազմի այս փուլում ժողովորի նկատմամբ խնայողական ու շատ ճիշտ քաղաքականություն վարեցին մեր լրատվամիջոցները, ինչը չի կարելի ասել համացանցում անկառավարելի տեղեկատվական հոսքի մասին, որը ինքնին դեզինֆորմացիա (ապատեղեկատվություն) էր և մարդուների ու պրեսների սկզբանաբարություր:

2. Փաստերի նորույթը: Բնակչության ուշադրությունը կարող են գրավել այն հաղորդագրությունները, որոնք դեռ լայն արձագանք չեն ստացել: Դրանք կարող են լինել տնտեսության զարգացման վերաբերյալ վերջին տվյալները, գործազուրկների թիվը, դեպքի այլ մոլորակներ թթիչքը կամ նոր քաղաքական կուսակցությունների ու դրանց առաջնորդների մասին:

3. Հաջողություն: Ըստ այդ սկզբունքի՝ հեռուստահաղորդումների և հոդվածների մեջ շեշտվում են քաղաքական լիդերների, կուսակցությունների, ինչպես և պետությունների հաջողությունների մասին [9]:

Շատ կարևոր է այդ առումով հայտնի սպորտսմենների, մարզիկների, երգչների ու դերասանների ակտիվ սոցիալական ու քաղաքական կյանք ներգրավումը, նրանց

ՄԵՍՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

հաջողության գաղտնիքներին բացահայտումը, փորձի կիսումը, կյանքի իրական դժվարությունների ներկայացումն ու դրանց հաղթահարման ճանապարհների բացումը: Այս ամենն իր մեջ դաստիարակչական, զարգացնող, կովող ու մոտիվացնող էլեմենտներ է պարունակում, ինչն անհրաժեշտ է ոչ միայն երիտասարդությանը, այլև բոլոր սերունդներին՝ ծիցտ, առողջ ու դրական ինֆորմացիայով սնվելու համար:

Բարձր սոցիալական կարգավիճակը: Որքան բարձր է տեղեկատոի կարգավիճակը, այնքան ավելի նշանակալից է համարվում տվյալ հարցագրույցը կամ հեռուստահաղորդումը, որը կապված է կոնունիկատորի «այցելումսի էֆեկտի» հետ: Հաշվի արնելով այդ կանոն՝ ԶԼՍ-ների նկատմամբ հասանելություն ունեն այն անձինք, ովքեր քաղաքական, ռազմական կամ եկեղեցական ոլորտներում բարձր պաշտոններ են գրադեցնում՝ նախագահներ, գորավարներ, նախարարներ և այլն: Նրանց են հատկացվում թերթերի արագին էջերը, կարևոր ռադիոն և հեռուստահաղորդումները [10]:

Ժամանակակից աշխարհի տեղեկատվական էվոլյուցիան թույլ է տալիս ենթադրել, որ իսկապես կարելի է մինիմալ ժամանակ ու ռեսուրսներ ծախսելով՝ անձինք բերել կամավորել հնագանդության: O. Տոֆֆերը նշում է, որ «ժամանակակից բարձրորակ իշխանություն և առավել արդյունավետություն տալիս են այն գիտելիքները, որոնք նպաստում են ցանկալի նպատակների հրագործմանը՝ նվազագույն ժախսելով իշխանության ռեսուրսները, այլ մարդկանց համոզելու տվյալ նպատակում իրենց իսկ անձնական շահագրգուվածության մեջ՝ թշնամիների դաշնակիցներ դարձնելով»[11]:

Ըստ Յու. Ա. Երմակովի XXI դարում մարդկանց, հասարակական կարծիքի և զանգվածային գիտակցության դեստրուկտիվ մանափույացիան, կարող են ազգային կոնֆլիկների, բնական և դեմոգրաֆիական աղետների հետ վերածվել երրորդ հազարամյակի սկզբի գորալ հիմանխնդիրների [12]: Ներկա կյանքի պայմաններում իշխանությունը ԶԼՍ-ների ձեռքին է, քանի որ ինընց դրանք են ինֆորմացիայի սկզբնաղբյուր:

«Ունենալ կարևոր տեղեկություններ՝ նշանակում է ունենալ իշխանություն, կարողանալ տարբերել արաջնային տեղեկությունը երկրորդականից՝ նշանակում է ունենալ ավելի շատ իշխանություն, կարևոր ինֆորմացիան սեփական ռեժիսորությամբ տարածելը կամ այն թաքցնել կարողանալը, նշանակում է ունենալ երկակի իշխանություն»[13]:

Անձի, հանրույթի և ազգի անվտանգության խնդիրը անհրաժեշտ է դիտարկել նաև հոգևոր անվտանգության համատեքսուում: Այս առումով ևս կարևոր է տեղեկատվության ազդեցությունը հասարակության հոգևոր ոլորտի վրա, որը տերմինաբանորեն նշում է՝ տեղեկատվական-հոգեբանական ազդեցություն: Տվյալ հասկացությունը բնորոշում է հասարակության հոգեբանական վիճակների և բնութագիրների փոփոխությունը՝ տեղեկատվական-կոմունիկատիվ գործընթացների ազդեցության տակ: Այսինքն՝ հոգեբանական անվտանգության պահպաննաման մեխանիզմները կարելի է դասակարգել երկու հիմնական խմբի արտաքին և ներքին: Առաջին խումբը՝ տեղեկատվության աղբյուրներն ու լրատվամիջոցներն են, որոնք անմիջապես ազդում են իրականության ընկալման վրա և դեկավարում մեզ: Երկրորդը՝ սուբյեկտիվ կամ երկրորդ իրականություն ստեղծող ցնորդն է: Ցավալի է, երբ որպես անձի տեղեկատվական-հոգեբանական անվտանգության սպառնալիք հանդես է գալիս ինընց պետությունը, այսինքն դրա տակ թաքնված պետական բարձրադիր այրեր, որոնք շահարկում են իրենց պաշտոնն ու պետական ապարատի իշխանությունը, իրենց իսկ ամբողջամերն ու շահերը բավարարելու նպատակով:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Տեղեկատվական-հոգեբանական անվտանգության հայեցակարգի բովանդակությունը կարող ենք սահմանել որպես անհատական, խմբային և սոցիալական հոգեբանական պաշտպանվածություն:

Դիտարկելով լարվածության և ներքին կոնֆլիկտների առաջացման պատճառները ժամանակակից մարդու մոտ՝ ամերիկացի հոգեվերլուծող Կարեն Հորմին նշել է. «Հակասությունների պատճառն այն է, որ մենք մի կողմից՝ գնահատում և առաջարդում ենք մրցակցության կոնցեպցիան, որպես առաջնարացի շարժիչ, իսկ մյուս կողմից պրոպագանդում ենք եղայրական սեր ու խոնարհության»[14]:

Ծատ կարևոր է այն հանգամանքը, թե ինչպես ենք դիտարկում տեղեկատվությունը որպես անձի, խմբի, հնարույթի և ազգի անվտանգության բաղադրամա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Անձի կենսագործունեության հոգեբանական անվտանգություն// կոլեկտիվ մենագրություն, հեղ.՝ Ռ. Վ. Աղուգումյան, Վ. Ռ. Պապյան, Ա. Ս. Գալստյան, Ե. Բ. Սուրայյան, Դ. Յ. Սարգսյան, Ծ. Ս. Ամիրյան // Եր., 2015, 142 էջ:
2. Краснянская Т. М., Тылец В. Г., Понятийные ориентиры развития психологической безопасности личности в предметном поле современных исследований/GESS: Education Science and Psychology, N1 (23), 2013, с. 59-64.
3. Միացյալ Ազգերի կազմակերպության պաշտոնական կայք, տես՝ www.un.org/secureworld/report.pdf
4. Грачев Г. В., Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты, М.: Изд-во РАГС, 1998 -с. 4.
5. Богомолова Н.Н., Социальная психология печати, радио и телевидения. М., 1991; Ермаков Ю.А. Манипуляция личностью: Смысл, приемы, последствия. Екатеринбург. 1995; Шерковин Ю.А. Психологические проблемы массовых информационных процессов. М., 1973.
6. Грачев Г.В., Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты, М., 1998, стр. 10.
7. Пугачев В.П., Соловьев А.И., Введение в политологию. М., 1995. стр. 260
8. Грачев Г.В., Информационно-психологическая безопасность личности: состояние и возможности психологической защиты, М.: Изд-во РАГС, 1998, стр. 15.
9. Նույն տեղը՝ էջ 16:
10. Նույն տեղը:
11. Toffler Al. Powershift: Knowledge, Wealth, and Violence at the Edge of the 21-st Century. — New York; London, 1990. P. 114
12. Ермаков Ю.А., Манипуляция личностью: Смысл, приемы, последствия. Екатеринбург, 1995.
13. Politikwissenschaft: eine Grundlegung. Bd. 2. Stuttgart; Berlin; Koln; Mainz: hrsg von Klaus von Beume. 1987. P. 60
14. Шостром Э., Анти-Карнеги, или Человек-манипулятор. Минск, 1992. стр. 128.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տեղեկատվական անվտանգությունը հոգեբանական անվտանգության բաղադրամաս
Ողպայշ Հարությունյան

Տեղեկատվական հոգեբերի կտրուկ աճող սպառնալիքներն ու մշակութային տուալ հարձակումները XXI դարի լուրջ ու հրատապ խնդիրներից են: Այս առումով անձի անվտանգության մարտահրավերները ձեռք են բերել որակապես նոր կառուցվածք: Անձի վրա ազդում է ոչ միայն մշտական տեղեկատվական շփումը շրջապատող սոցիալական իրականության հետ, այլ նաև դրա բացակայությունը: Տեղեկատվության հոսքի դադարումը կամ տեղեկատվության սահմանափակումը կարող է բերել հոգեկան լուրջ անոնակաների՝ ընդհուպ մինչ հոգեկան խանգարում: Սույն հոդվածում փորձ է արվել դիտարկելու տեղեկատվական անվտանգությունը անձի հոգեբանական անվտանգության համատեքստում:

РЕЗЮМЕ

Информационная безопасность – компонент психологической безопасности
Розалия Арутюнян

Ключевые слова: безопасность, психологическая безопасность, СМИ, информационная война, информационная безопасность, социализация

Острые растущие угрозы информационных потоков и культурные тотальные атаки являются одним из серьезных и актуальных вопросов XXI века. В этой связи проблемы безопасности человека приобрели качественно новую структуру, и не только постоянное информационное сообщение влияет на социальную реальность, окружающую человека, но и на ее отсутствие. Остановка информационного потока или ограничение информации может привести к серьезным психическим аномалиям, включая психические расстройства. В данной статье мы попытались рассмотреть информационную безопасность в контексте психологической безопасности человека.

SUMMARY

Information Security of Psychological Safety Components
Rozalya Harutyunyan

Keywords: security, security, psychological security, media, information war, information security, socialization

The sharp growing threats of information flows and cultural total attacks are one of the serious and urgent issues of the twenty-first century. In this regard, the person's security challenges have acquired a qualitatively new structure, and not only the permanent information communication affects the social reality surrounding the individual, but also its lack. Stopping the information flow or limiting information can lead to serious mental anomalies, including mental disorders. In this article, an attempt has been made to consider the information security in the context of a person's psychological security.